Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 956-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է վերջիններիս ապահովել կենցաղային տեխնիկայով: Ծրագրի շրջանակներում կենցաղային տեխնիկան տրամադրվելու է Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում բնակություն հաստատած Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզեր, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	26,882,500 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված կարիքավոր ընտանիքներ, որոնք բնակություն են հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունվարի 25-ից մինչև 2024 թվականի մարտի 25-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների համար ձեռք են բերվելու 200 հատ յուղային տաքացուցիչներ՝ 4.320.000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունվարի 25-ից մինչև 2024 թվականի մարտի 25-ը ժամանակահատվածում: 2. Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների համար ձեռք են բերվելու 950 հատ յուղային տաքացուցիչներ՝ 22,562,500 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունվարի 25-ից մինչև 2024 թվականի մարտի 25-ը ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների համար կենցաղային տեխնիկայի տրամադրում՝ 4,320,000 դրամ: 2. Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների համար կենցաղային տեխնիկայի տրամադրում՝ 22,562,500 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետների աշխատակազմեր և համայնքապետարաններ: Կառաջնորդվեն նաև e-soc.am հարթակով:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ